

ՀԱՅ ՏԱՌԵՐԸ ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒԽ

Հայութիւնը որչափ ապրի նոյնքան ատեն պիտի յիշատակուխն Մեսրոպայ և Սահակայ անզուգական զոյքին անմոռաց անունները . զորս յաւերժացնելու ու պանծացնելու համար կ . Պոլսոյ բոլոր հայ ոսկերիչները գեղեցիկ յզացումը ունեցած են պատրաստելու Յիշատակարան-կոթող մը ազամանդակուս հայ տառերով : Մայնաւոր յանձնախումբ մը այսօր զայն պիտի մատուցանէ Պատրիարքարան հանդէսի ժամանակ , յետոյ դրկուելու համար Ս . էջմիածնի թանգարանը : Սոյն յիշատակարանը մօտաւորապէս 200 ոսկի արժէք ունի : Կոթողին վրայ հետեւելու արձանագրութիւնը քանդակուած է , զոր քերթած է երուանդ Տէր Անդրէասեան :

413 — 1513 — 1913

Հոկտ . 13 , Կ . Պոլիս

• Թսկի մատին Մեսրոպայ ,

Հաննաւեղին Սահակայ ,

Այս յիշատակ ոսկինոյ .

Զօր ոսկերչաց կազմեաց հոյլ :

ՅՈՒԲԵԼԵԱՆ ԲՈԼՈՐԱԳԻՐ

10 ԲՈՒԽԹՈ

Հայ տառերու Գիւտին Հազար հինգ հարիւրամեակին առթիւ ուղեցի մեր Հայ Տպագրութիւնն օժտել նոր տեսակ տառով մը . այս մտօք ձեռնարկեցի նոր տասը բունթօ զբերու փորագրութեան : Տկար արհեստաւորիս ձեռակերտն եղող սոյն տառերու ձեւին և շինուածքին մասին եթէ քիչ կամ շատ թերութիւն տեսնեն յարգելի Տպագրիչները , պիտի խնդոէի որ քննադատելէ աւելի՝ բարութիւնն ունենան թերութիւնները նշանակելու , որպէսզի աշխատիմ ուղղել և աւելի նարկայանալի վիճակի վերածել :

Այսպէս , եթէ յաջողիմ օգտակար ընծայել զայս ազնիւ ընթերցողաց , ոյն ժամանակ ինքզինքս վարձատրուած պիտի համարիմ , և Հայ : Տպագրութեան փոքրիկ ծառայութիւն մը մատուցած ըլլալու գոհունակութիւնն ու հաճուքը պիտի ունենամ :

ԽԱԶԻԿ ԳԵՐՐԳԵԱՆ